

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

11.05.1999 թ.
ք. Երևան

N 744

ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ «ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ» ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հրամայում եմ

Հաստատել ՀՀ Արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության «Աճուրդի անցկացման կանոնակարգը»:

Նախարար

Դ. Հարությունյան

*Հաստատում եմ
ՀՀ արդարադատության նախարար
Դ. Հարությունյան
11.05.1999 թ.*

ԱՃՈՒՐԴԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Աճուրդին մասնակցելու ցանկություն հայտնաբերող անձինք հայտով նախատեսված գույքի գնի հինգ տոկոսի չափով նախավճար են մուծում դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության ներկայացուցչին կամ ծառայության համապատասխան դեպոզիտ հաշվին: Կանխիկ նախավճարի, ինչպես նաև ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցված նախավճարը վճարելու վերաբերյալ փաստաթղթերի ընդունումը դադարեցվում է աճուրդը սկսելուց մեկ ժամ առաջ:

Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձանց կանխիկ մուծված նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց անմիջապես հետո, իսկ ծառայության դեպոզիտ հաշվին փոխանցվածը՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման նաև այն դեպքում, երբ աճուրդը չի կայացել:

2. Աճուրդում հաղթած է ճանաչվում այն անձը, որն առաջարկել է ամենաբարձր գինը:

Աճուրդում հաղթած անձը և հարկադիր կատարողն աճուրդն անցկացնելու օրը ստորագրում են դրա արդյունքների վերաբերյալ արձանագրությունը:

Եթե աճուրդում հաղթած անձը հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը:

Եթե հարկադիր կատարողը հրաժարվում է արձանագրությունը ստորագրելուց, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթած անձին վերադարձնել նախավճարի կրկնապատիկը:

3. Աճուրդում հաղթած անձը պարտավոր է այն անցկացնելու օրվանից եռօրյա ժամկետում հարկադիր կատարման ծառայության մարզային ստորաբաժանման դեպոզիտային հաշվին մուծել այն գումարը, որով գնել է գույքը (գնման գինը)՝ հաշվանցելով նախօրոք մուծված նախավճարը: Այդ գումարը չմուծելու դեպքում նախավճարը չի վերադարձվում:

4. Աճուրդում հաղթած անձի կողմից գնման գինը մուծելուց հետո՝ եռօրյա ժամկետում հարկադիր կատարողը նրա հետ կնքում է առուվաճառքի պայմանագիր:

Եթե աճուրդում վաճառվել է գույք, որի նկատմամբ իրավունքները ենթակա են պետական գրանցման, ապա առուվաճառքի պայմանագիրը և աճուրդի արդյունքների վերոհիշյալ արձանագրությունը հիմք են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցամատյանում անհրաժեշտ գրառումներ կատարելու համար:

5. Վերոհիշյալ կանոնների խախտմամբ անցկացված աճուրդը շահագրգիռ անձի հայցով դատարանը կարող է ճանաչել անվավեր:

Աճուրդն անվավեր ճանաչելը հանգեցնում է դրանում հաղթած անձի հետ կնքված պայմանագրի անվավերության:

6. Աճուրդը համարվում է չկայացած եթե.

1) Աճուրդին ներկայացել է միայն մեկ գնորդ կամ չի ներկայացել որևէ գնորդ.

2) աճուրդի ընթացքում վաճառվող գույքի նախնական գնի հավելում չի կատարվել.

3) աճուրդում հաղթած անձը չի մուծել գնման գինը:

Աճուրդը հայտարարվում է չկայացած աճուրդը կազմակերպող դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության պետի որոշմամբ ոչ ուշ քան նշված հանգամանքները վրա հասնելու հաջորդ օրը:

7. Յուրաքանչյուր կրկնակի աճուրդ անցկացնելու դեպքում վաճառվող գույքի նախնական գինն իջեցվում է քսան տոկոսով:

Կրկնաճուրդն անց է կացվում չկայացած աճուրդից ոչ ուշ քան մեկ ամիս հետո:

8. Աճուրդներն անցկացվում են դասական (մեկնարկային գնի բարձրացմամբ) եղանակով:

Գրանցված է

Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության կողմից

23 նոյեմբերի 2006 թ.

Պետական գրանցման թիվ 10506391